Եթե դու անմիջականորեն անցել ես գոյատեւման մարտահրավերներով (օրինակ՝ պատերազմ, դրա ուղղակի եւ անուղղակի հետեւանքներ) կամ կրել ես դրանց անուղղակի սուր ազդեցությունը եւ կյանքդ բաժանվել է այդ իրադարձությունից «առաջ/հետո» փուլերի՝ հանգեցնելով վարքային, հուզական կամ կյանքի որակի կտրուկ փոփոխության՝

ՈՒՐԵՄՆ ԴՈՒ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՍ ԱՆՑՆԵԼՈՒ «ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ»:

Միջազգային եւ հայաստանյան ամենահեղինակավոր մասնագետները ստեղծել են յուրահատուկ ծրագիր, որն օգնում է մարդկանց նորովի գնահատել իրենց կյանքը, առերեսվել այլոց պատմությունների հետ եւ, հենվելով հոգեւոր արժեքների ու մեր պատմության կենսունակ օրինակների վրա, վերակերտել իրենց կյանքի ապագայամետ ուժեղ պատումները:

«Վերականգնման հայկական ճանապարհով» կարող են անցնել 18 տարին լրացած բոլոր այն անձինք, ովքեր կյանքում անցել կամ անցնում են սուր տրավմատիկ իրադարձությունների միջով ու կարիք ունեն վերագտնել հավատը սեփական ուժերի եւ այլոց նկատմամբ:

Կախված հոգեվիճակից փոխվում են նաեւ մեր պատմությունները: Հետտրավմատիկ սթրեսը կարող է ստվերել մեր մասին առավել կենսունակ պատմությունները, բացասաբար ազդել ինքնագնահատականի վրա ու խլել մեր ապրելու, առաջ գնալու ներուժը:

«ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ» կօգնի վերագնահատել քո կյանքի ձեռքբերումները ու վերադարձնել երազանքներդ:

«ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ» ծրագրի ընդհանուր տեւողությունը երեք ամիս է:

ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՔՈ ՃԱՆԱՊԱՐՀԸ
սկսելու համար պետք է լրացնել Հիմնադրամի՝ **revival.am** կայքում տեղադրված թեստն ու թողնել կոնտակտները:

Կայք կարող եք մուտք գործել ու թեստը լրացնել՝ նաեւ սկանավորելով **QR** կոդը:

www.revival.am

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հիմնադրամի առաքելությունն է զարկ տալ հոգեւոր-հոգեբանական վերականգնմանը՝ համադրելով հոգեբանության ժամանակակից մեթոդները հայ ժողովրդի գոյաբանական պատմության եւ Հայ Եկեղեցու ավանդույթների հետ:

Մեր գլոբալ առաքելությունն է վերափոխել հետճգնաժամային իրավիճակներում հոգեկան առողջության վերականգնման մասին արդի մոտեցումները՝ ստեղծելով «հոգեւոր-հոգեբանական» լուծումներ:

Հիմնադրամը ստեղծվել է ամերիկահայ բարերար Նուբար Աֆեյանի տեսլականով եւ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ:



ԱՄՈՔՎԵԼ

«Ամոքվել»-ը վեցշաբաթյա խմբային աշխատանք է, յուրաքանչյուր շաբաթ մեկ հանդիպում՝ 2-2.5 ժամ տեւողությամբ: Խումբը բաղկացած է 10-12 մասնակցից, որոնց հետ աշխատում է Հիմնադրամի կողմից վերապատրաստված մասնագետը: Խմբային հանդիպումները օգնելու են մարդկանց փոխաջակցության մթնոլորտում վերակերտել իրենց կյանքի ապագայամետ ուժեղ պատումները:

ԶՈՐԱՆԱԼ

«Զորանալ»-ը երկօրյա ծրագիր է, որը հաջորդում է 6-շաբաթյա խմբային աշխատանքին: Խումբը բաղկացած է մինչեւ 30 մասնակցից, որոնցից 10-ը «Ամոքման» ծրագրի շահառուներն են: Հիմնադրամի կողմից վերապատրաստված մասնագետները կօգնեն ծրագրի մասնակիցներին նորովի բացահայտել իրենց ռեսուրսները՝ առերեսվելով մեր պատմության առանձին դրվագների ու մեր հոգեւոր արժեքների հետ: Մասնակիցներից ոմանց հետ կիրականացվի նաեւ հավելյալ փոքր խմբային աշխատանք:

ՀԱՋՈՂԵԼ

«Հաջողել»-ը ծրագրի վերջին փուլն է: Այն մոտ չորս ժամ տեւողությամբ համայնքային մեծ միջոցառում է, որին մասնակցում են «Ամոքվելու» եւ «Զորանալու» փուլերի մասնակիցները եւ նրանց կողմից հրավիրված մեկական մասնակից: Նրանք միասին լսում, քննարկում են վերականգնման ու հաջողության պատմություններ եւ համատեղ ուժերով մշակում են համայնքային աշխուժացման ծրագրեր, որոնք իրականացվելու են Հիմնադրամի աջակցությամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ
ՀՈԳԵՎՈՐ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ